ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի
ղեկավար պարոն Ս. Կոստանդյանին

Հարգելի պարոն Կոստանդյան

Հայտնում եմ, որ «Զով-Գուժ» ՍՊԸ-ն ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի վարչական սահմաններում ցանկանում է իրականացնել Քարաբերդի ոսկու հանքավայրի արևմտյան և արևելյան տեղամասերում օգտակար հանածոյի արդյունահանման երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ: Ներկայացնում եմ ծանուցումը.

1) նախաձեռնողի անունը (անվանումը) և բնակության (գտնվելու) վայրը

Գործունեության նախաձեռնողը «Զով-Գուժ» ՍՊ ընկերությունն է: Իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցման համարն է 273.110.1365869, գրանցման ամսաթիվը՝ 24.01.2024թ., գտնվելու վայրը՝ ՀՀ, 0086, Երևան քաղաք, Հյուսիսային պող. 1, 2/3:

2) նախատեսվող գործունեության անվանումը՝ օրենքի 12-րդ հոդվածին համապատասխան, նպատակը, համառոտ նկարագիրը.

Քարաբերդի ոսկու հանքավայրի արևմտյան և արևելյան տեղամասերը **գտնվում են Հայաստանի Հանրապետության հյուսիսային մասում, վարչական տեսակետից Լոռու մարզում՝ Վանաձոր քաղաքից 4.5կմ հեռավորության վրա դեպի հյուսիս-արևելք, Բազումի լեռնաշղթայի հարավային լանջին:** Երկրաբանական ուսումնասիրություն, ինչ համապատասխանում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2)-րդ կետի ա. ենթակետին՝ երկրաբանական ուսումնասիրություններ: Շրջանն ունի բավական բարդ և հետաքրքիր երկրաբանական կառուցվածք, որը պայմանավորված է դրա տեղադիրքով Փոքր Կովկասի մեգանտի-կլինորիումի Սևան-Ամասիայի տեկտոնական գոտու հյուսիս-արևմտյան մասում: Վերջինս գտնվում է Սոմխեթո-Ղարաբաղի և Հայկական ծալքավոր գոտիների միջև:

Ուսումնասիրվող շրջանն ունի բլոկային կառուցվածք, գտնվում է առաջին կարգի տեկ-տոնական բլոկների՝ Փամբակի գրաբեն իջվածքի և Բազումի հորստ-բարձրացման հանգույցում, որոնց հպման մասով անցնում է Սևանա-Աքերինյան երկարակյաց ընդհանուր կովկասյան տարածման խորքային խզվածքի առանցքային գոտին: Տարածաշրջանը կապված է տարբեր հասակի տեկտոնական և մագմատիկ բազմակի ակտիվացման հետ, աչքի է ընկնում ոսկու, պղնձի, բազմամետաղների, մանգանի, երկաթի նաև ծծմբի կոլչեդանի էնդոգեն հանքայնացման բազմաթիվ կետերի, հանքերևակումների և առանձին դեպքերում հանքավայրերի առկայությամբ: 2002-2008թթ.-ի աշխատանքների ընթացքում ուսումնասիրվել են Քարաբերդի հանքավայրի Արևելյան և Արևմտյան տեղամասերը: Հանքավայրի *Արևմտյան տեղամասը* գտնվում է բուն Քարաբերդի ոսկու հանքավայրից արևմուտք, 100-150 մետր հեռավորության վրա և ձգվում է դեպի հյուսիս-արևմուտք մոտ 1800-2000 մետր:

Երկրաբանական կառուցվածքում մասնակցում են վերը նկարագրված նույն հրաբխանստվածքային ապարները, որոնք հիդրոթերմալ խիստ փոփոխված են՝ ենթարկված կարբոնատացման, օխրայացման, քվարցացման:

2007-2008թթ. կատարված որոնողական աշխատանքների արդյունքում մակերեսային լեռնային փորվածքներով (հետախուզաառուներ) մերկացվել են մի շարք երակային տիպի հանքային մարմիններ քվարց-բազմամետաղային և քվարց-մալախիտ-բազմամետաղային կազմով: Խորքում հանքայնացումն ուսումնասիրվել է 70մ խորությամբ թիվ 1 հորատանցքով:

Քարաբերդի ոսկու հանքավայրի *Արևելյան տեղամասը* հայտնաբերվել է 2007թ.-ին որոնողական աշխատանքների արդյունքում և գտնվում է բուն հանքավայրից 1.0-1.1 կմ դեպի հարավ-արևելք: Տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են միջին էոցենի հասակի հրաբխանստվածքային ապարները, ներկայացված տուֆավազաքարերով, տուֆափշրաքարերով և պլագիոկլազային պորֆիրիտներով, որոնք հանքային մարմինների տարածման սահմաններում ենթարկված են հիդրոթերմալ փոփոխման:

Աշխատանքների ակնկալվող արդյունքներն են՝

- ✓ մշակել տեղամասի արդյունաբերական նշանակության վերաբերյալ արդիականացված տեղեկատվական համակարգ,
- ✓ հաշվարկել և հիմնավորել կոնդիցիաների նոր պարամետրեր,
- ✓ իրականացնել Կենտրոնական տեղամասի պաշարների վերգնահատում,
- ✓ ապահովել ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 59-րդ հոդվածի 4-րդ մասի և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 08.08.2022թ.-ի «Օգտակար հանածոների հանքավայրերի կոնդիցիաների պարամետրերի երկրաբանատնտեսագիտական հիմնավորման մեթոդական ցուցումները սահմանելու մասին» №12-Ն հրամանի պահանջները:

Բնապահպանական միջոցառումներից նախատեսվում է.

- փոշեառաջացման կրճատում և վերահսկողություն՝ հորատման լուծույթների կիրառման, հորատման հարթակների ջրցանման, ռեկուլտիվացիայի եղանակով;

- հողերի պահպանություն՝ հորատման հարթակներից հողաբուսական շերտը նախապես հեռացնելու, պահեստավորելու և հետագա կենսաբանական ռեկուլտիվացիայի ժամանակ օգտագործելու եղանակով;

- տեղամասի աղտոտման բացառում՝ կենցաղային աղբի հավաքման և կազմակերպված աղբավայր տեղափոխելու եղանակով;

- Շրջանի կենսաբազմազանության պահպանության նպատակով տեղամասի շահագործման աշխատանքներին մասնակցող անձնակազմի վերապատրաստում և ծանուցում շրջանում հայտնի՝ ՀՀ կենդանիների և բույսերի կարմիր գրքերում գրանցված տեսակների վերաբերյալ:

- Հազվագյուտ երկրաբանական մերկացումներ և հանքաբանական գոյացումներ, երկնաքարեր, հնէաբանական, հնագիտական, գիտական և գիտամշակութային հատուկ արժեք ներկայացնող այլ օբյեկտներ հայտնաբերելու դեպքում աշխատանքների դադարեցում և այդ մասին լիազոր մարմնին տեղեկացում՝ հետագա աշխատանքների ընթացքը պարզաբանելու նպատակով:

- Աշխատանքների ընթացքում պատահական գտածոների ընթացակարգի կիրառում :

3) նախատեսվող գործունեության իրականացման վայրը:

Աշխատանքները կատարվելու են Հայաստանի Հանրապետության հյուսիսային մասում, վարչական տեսակետից Լոռու մարզում՝ Վանաձոր քաղաքից 4.5կմ հեռավորության վրա դեպի հյուսիս-արևելք, Բազումի լեռնաշղթայի հարավային լանջին: Հանքավայրի ամենամոտ բնակավայրը դեպի հյուսիս-արևմուտք գտնվող Քարաբերդ գյուղն է, որի հետ այն հաղորդակցվում է մոտ 1.5կմ երկարությամբ գրունտային ճանապարհով:

Հիմք ընդունելով <<ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ>> ՀՀ օրենքի և ենթաօրենսդրական ակտերի պահանջները խնդրում եմ «Զով-Գուժ» ՍՊԸ-ի ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի վարչական սահմաններում Քարաբերդի ոսկու հանքավայրի արևմտյան և արևելյան տեղամասերում օգտակար հանածոյի արդյունահանման երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման համար կազմակերպել հանրային ծանուցում/լսում և տալ համաձայնություն:

Կից ներկայացվում է հատակագիծը՝ կոորդինատներով:

«Զով-Գուժ» ՍՊԸ
տնօրեն՝ Հ. Հակոբյան

Հասցե՝ ք.Երևան Հյուսիսային պող. 1, 2/3
հեռ. 91421042

Կոորդինատային համակարգը՝ ArmWgs-84

No	Y	X
1	8457613,3137	4523641,2667
2	8457616,6904	4523685,0560
3	8457761,7182	4523871,7290
4	8457748,3160	4523960,2594
5	8459014,3746	4522446,0938
6	8458783,8113	4521410,1564
7	8458658,6876	4521504,8467





Կոորդինատային համակարգը՝ ArmWgs-84

No	Y	X
1	8459509,1344	4520782,9197
2	8459888,3364	4521990,6343
3	8460909,1095	4522062,7199
4	8460907,1894	4522037,7371
5	8460812,5684	4521912,5761
6	8460918,2564	4521785,2231
7	8461061,1637	4521707,2335
8	8460857,5328	4521342,5346
9	8460813,9816	4521374,0503
10	8460710,7162	4521344,9678
11	8460578,2212	4521566,4049
12	8460484,7334	4521513,1371
13	8460400,2589	4521193,8604
14	8460225,7404	4520955,6467
15	8460191,2160	4521008,6656
16	8460096,2514	4521015,5781
17	8460045,5964	4520938,4131
18	8459944,1440	4521098,1544
19	8459846,5914	4521084,1941
20	8459817,3934	4521014,4761
21	8459824,7104	4520948,1071
22	8459616,6995	4520752,9494